# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 127-Ա**

**« 26 » ՄԱՅԻՍ 2022Թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 26-ի N 67-Լ հրամանը՝

**Որոշում եմ**

1. Հաստատել 2022 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 9-ի N 03 հրամանով հաստատված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ հսկողություն իրականացնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

5/26/2022

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք. Երևան**

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2022
թվականի մայիսի 26-ի թիվ 4-Ա որոշման

2022 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| հ/հ | Համայնքի անվանում | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ | Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 2-րդ եռամսյակ | | | | | |
| 1 | Եղեգիս | 30.05.2022թ.-10.06.2022թ. | Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների բնագավառ | ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Աղվան Հարությունյան |
| | | | | Սոցիալական ապահովության և առողջապահության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Ցողիկ Բաբայան, |
| | | | | Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Լյուսյա Պողոսյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Վանիկ Խուդավերդյան |
| | | | | Հողաշինության և հողօգտագործման բաժին մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Սմբատ Խլխաթյան |
| | | | | Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Գոհար Խաչատրյան |
| | | | | ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Ռուստամ Զոհրաբյան |
| | | | | Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Արամ Կոստանյան |
| | | | | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Անահիտ Սարգսյան |
| | | | | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Անահիտ Մխիթարյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ՝ խմբի անդամ | Լիլիա Կարապետյան |
| | | | | Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Սամվել Հովսեփյան |
| | | | | Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Խաչիկ Ասլանյան |
| | | | | Իրավաբանական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Նարինե Մաղաքյան |